



0084, Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060-38-00-01

0084, Z. Andranik st.1, Yerevan, Republic of Armenia

Tel: 060-38-00-01

МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ
И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО “ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084, Республика Армения, город Ереван, ул.З. Андраника 1
Тел: 060-38-00-01, E-mail: hven@hven.am, www.hven.am

No. 49-2

«12» 04 2021թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետով և հաշվի առնելով թիվ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/02» պայմանագրի շրջանակներում կատարվող աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և «Արտաշատի ԷՑՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև 2021 թվականի փետրվարի 23-ին կնքված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար օդային գծերի կառուցման աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ» թիվ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/02» պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված աշխատանքների կատարման որակի, ծավալների և ժամկետների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- | | |
|------------------|--|
| Անդրանիկ Պապոյան | - Ընկերության «Հարավային» տեղամասի շահագործման բաժնի պետ (Աշխատանքային խմբի ղեկավար) |
| Մինաս Գալիկյան | - Ընկերության «Հարավային» տեղամասի շահագործման բաժնի առաջատար ճարտարագետ (ԲԼՕԳ խմբի ղեկավար) |
| Արթուր Ավետիսյան | - Ընկերության վերահսկման և գույքի կառավարման բաժնի տեխնիկական հսկիչ (տեխնիկական հսկողություն իրականացնող): |


2. Աշխատանքային խմբին՝

2.1. Իրականացնել հսկողություն Պայմանագրի շրջանակներում Կապալառուի կողմից կատարվող աշխատանքների որակի, ծավալների և կատարման ժամկետների, ինչպես նաև դրանց Պայմանագրի պահանջներին և նախագծին համապատասխանելու նկատմամբ:

2.2. Կատարված աշխատանքների վերաբերյալ 5-օրյա պարբերականությամբ մանրամասն տեղեկատվություն (հաշվետվություն) ներկայացնել Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետին:

2.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտից հետո, դրանք Պայմանագրի պահանջներին համապատասխանելու դեպքում, սահմանված կարգով ստորագրել աշխատանքներն ավարտված լինելու վերաբերյալ արձանագրությունը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետին:



ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ